Հավելված N 1
ՀՀ կառավարության 2016 թ.
սեպտեմբերի 29-ի նիստի N 38
արձանագրային որոշման

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2017թ. տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Տարեկան ծրագիր) մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5.1 հոդվածին համապատասխան:
2. Տարեկան ծրագիրը ներառում է տվյալ բյուջետային տարում տարբեր ոլորտներում իրականացման ենթակա միջոցառումների, ծրագրերի, գործողությունների ամբողջությունը:
3. Ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել ՄԱԿ-ի 2006թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի /այսուհետ՝ Կոնվենցիա/ դրույթները, ինչպես նաև հանրապետական գործադիր շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված առաջարկությունները:

II. ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է՝

4. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և սոցիալական ներառմանն ուղղված միջոցառումների իրականացում՝ հանրապետական գործադիր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների համապարփակ, բազմակողմանի ներգրավվածության միջոցով:

Ծրագրի խնդիրներն են՝

5. հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, սոցիալական ներառման և սոցիալական պաշտպանության հարցերին առնչվող օրենսդրության կատարելագործումը,
6. հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների ապահովումը,
7. հասարակական կյանքի բոլոր ոլորտներում հաշմանդամության սոցիալական մոդելի գաղափարական հենքի ներդրումը,

8. բժշկասոցիալական փորձաքննության և հաշմանդամության սահմանման գործընթացում Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների և մոտեցումների կիրառման հենքի ստեղծումը,
9. հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի, բժշկական և սոցիալական սպասարկման կազմակերպումը,
10. հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը նպաստող համայնքային ցերեկային կենտրոնների ստեղծումը,
11. հաշմանդամություն ունեցող անձանց կրթության, մասնագիտական ուսուցման կազմակերպումն ու զբաղվածության խթանումը,
12. հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավումը մարզական և մշակութային ծրագրերում,
13. հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնումը,
14. հասարակության իրազեկվածության ապահովումը և ուշադրության բևեռումը հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների վրա:

III. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

15. Հաշմանդամության ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը, հիմնական մոտեցումները և պետական նպատակային ծրագրերը ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու հավասար պայմանների և հավասար հնարավորությունների ապահովմանը, նրանց սոցիալական ներառմանը:
16. 2010 թվականի հոկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած Կոնվենցիայի դրույթներին համապատասխան կատարվում են աստիճանական քայլեր՝ ուղղված հաշմանդամության ոլորտի օրենսդրական բարեփոխումներին, գործող ծրագրերի խթանմանը, նրանց հիմնախնդիրների լուծման նորովի մոտեցումներին:
17. Համաձայն 2014 թվականի հունվարի 9-ի «Անձի բազմակողմանի գնահատման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման /այսուհետ՝ ԱՀԿ ՖՄԴ/ սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման հայեցակարգին հավանություն տալու մասին» թիվ 1 արձանագրային որոշման դրույթների՝ իրականացվում են աշխատանքներ անձի կարիքների և կարողությունների բազմակողմանի գնահատման վրա հիմնված հաշմանդամության սահմանման նոր մոդելի ներդրման ուղղությամբ: Մշակվել են ԱՀԿ ՖՄԴ սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման չափորոշիչները, դրանք փորձարկվել

են պիլոտ ծրագրի ընթացքում, իրականացվում են համապատասխան վերլուծություններ:

18. Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց համար 2016թ հավասար հնարավորությունների տարի հայտարարելու և այդ կապակցությամբ անցկացվող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» N40 արձանագրային որոշման՝ տարբեր ոլորտներում իրականացվել են միջոցառումներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց հասարակական կյանքում բոլորի հետ հավասար իրավունքներով մասնակցություն ապահովելուն և հասարակության իրազկվածության բարձրացմանը: Իրականացված բազմատեսակ և բազմաբովանդակ միջոցառումները (հանրային միջոցառումներ, կլոր-սեղաններ, քննարկումներ, վերապատրաստումներ, դասընթացներ, աշխատանքային տոնավաճառներ, ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանմանը, հաշմանդամությանն առնչվող ճիշտ տերմինաբանության կիրառմանը և այլն), էապես նպաստում են հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ նոր մոտեցումների ձևավորմանը և ամրապնդմանը, նրանց իրավունքների պաշտպանությանը և իրացմանը, ինչպես նաև սոցիալական ներառմանը:

19. Շարունակվում են իրականացվել հասցեական ծրագրեր՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնմանը, նրանց որոշակի խնդիրների լուծմանն ու սոցիալական ներառմանը:

20. Պետական նպատակային ծրագրերի շրջամակներում հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվում են պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներ, այդ թվում վերին և ստորին վերջույթների պրոթեզներ, օրթեզներ, սեղմիրաններ, քայլակներ, հենակներ, ձեռնափայտներ, օրթոպեդիկ կոշիկներ, պրոթեզի կոշիկներ, կրծքագեղձի պրոթեզներ, գուլպաներ, ձեռնոցներ, սիլիկոնե գուլպաներ, ձայնաստեղծ սարքեր, աչքի պրոթեզներ, լսողական սարքեր, հաշմանդամի սայլակներ և այլն:

21. Շարունակվում է տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ տառատեսակներով /Բրայլյան/ գրքերի տպագրության, տետրերի պատրաստման, «Խոսող գրքերի» ձայնագրության ծրագիրը, որը նշված անձանց հնարավորություն է տալիս կարդալու, գրելու, տեղեկատվություն ստանալու, դրանով իսկ ներառվելու հասարակություն:

22. Պարբերաբար իրականացվում են «Հաշմանդամություն ունեցող անձանց հաշվառման» և «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների հաշվառման» տեղեկատվական համակարգերի արդիականացման աշխատանքներ, նպատակ ունենալով վերականգնողական և պրոթեզաօրթոպեդիկ պարագաների տրամադրման գործընթացը, ինչպես նաև

դրա վերահսկելիությունը ապահովել ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով՝ հնարավորինս բացառելով մարդկային գործոնի ազդեցությունը:

23. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման խնդիրը շարունակում է մնալ սոցիալական ոլորտի դժվար լուծելի հիմնախնդիրների շարքում: Վիճակագրական տվյալների համաձայն՝ 2016թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում հաշվառված 200177 հաշմանդամություն ունեցող անձանց 63,5%-ը /127044 անձ/ աշխատանքային տարիքի են:

24. 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ Զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններում հաշվառված են եղել 2499 հաշմանդամություն ունեցող անձ, 2015 թվականի ընթացքում աշխատանքի են ընդունվել 209 հաշմանդամություն ունեցող անձ, այդ թվում՝ 101-ը զբաղվածության պետական ծրագրերի միջոցով: Հաշմանդամություն ունեցող ևս 503 անձ ապահովվել է սեզոնային աշխատանքով:

25. Զբաղվածության աջակցության պետական ծրագրերին զուգահեռ աշխատանքներ են իրականացվում միջազգային կազմակերպությունների հետ համատեղ՝ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի հավասար պայմաններ և աշխատանքի մատչելիությունը ապահովելու ուղղությամբ: Մասնավորապես, 2012թ.-ից «Սեյվ դը չիլդրեն» հասարակական կազմակերպության կողմից՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ և Զբաղվածության պետական գործակալության համագործակցությամբ, իրականացվում է «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավումը զբաղվածության խթանման միջոցով» (LIFE) ծրագիրը, որի աջակցությամբ հանրապետությունում ընդլայնվել և հիմնվել է 19 սոցիալական ձեռնարկություն, որտեղ աշխատանքի է տեղավորվել 200 հաշմանդամություն ունեցող անձ:

26. «Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվում է Գյումրի քաղաքի աշխատանք փնտրող հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային ունակությունների վերականգնման, մասնագիտական վերականգնման, կողմնորոշման, սոցիալ-հոգեբանական խորհրդատվության տրամադրման ծառայություններ և այլն:

27. 2015-2016 թթ. ուսումնական տարում շարունակվել են աշխատանքները ներառական կրթության ընդլայնման ուղղությամբ. 2015-2016 թթ. սեպտեմբերի 1-դրությամբ հանրապետության 153 հանրակրթական դպրոցներում կազմակերպվում է ներառական կրթություն (առանց Տավուշի մարզի փորձնական ծրագրի), որտեղ սովորում են 4708 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ: Երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման հիմքում դրված են ԱՀԿ ՖՄԴ սկզբունքները:

28. Ապահովվել է անվճար հիմունքներով կրթությունը միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, առնվազն անցումային միավոր ստացած հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև ուսման ընթացքում հաշմանդամ դարձած անձանց համար:
29. Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնումն իրականացվել է «Արթմեդ» բուժվերականգնողական կենտրոնում, ինչպես նաև Միջազգային Կարմիր Խաչի հետվնասվածքային վերականգնողական, Գյումրու վերականգնողական, Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական կենտրոններում, «Օշական» մանկական վերականգնողական կենտրոնում, «Արարատ» մոր և մանկան կենտրոններում և այլ կազմակերպություններում:
30. Հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը և սոցիալական սպասարկումն իրականացվում է ինչպես շուրջօրյա խնամքի հաստատություններում, այնպես էլ տնային պայմաններում:
31. Կառավարության ուշադրության կենտրոնում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հիմնախնդիրները: Իրականացվում են աշխատանքներ հոգեկան առողջության ոլորտում համայնքահեն ծառայությունների նոր մոդելների ներդրման, այլընտրանքային ծառայությունների ստեղծման ու պահպանման, առկա ռեսուրսների ու ներուժի հզորացման, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրմանն առնչվող իրավական հիմքերի մշակման ուղղությամբ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության հետ ստորագրել է փոխըմբռնման հուշագիր, որի շրջանակներում մշակվել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կարիքների գնահատման մեթոդաբանություն, իրականացվել է կարիքների գնահատման, ծառայությունների տրամադրման չափորոշիչների մշակման աշխատանքներ: Իրականացված աշխատանքների արդյունքում 2016 թվականի մայիս ամսին բացվել է Հայաստանում իր տեսակի մեջ նախադեպը չունեցող նոր ծառայություն՝ Սպիտակի խնամքի տունը, որի ֆինանսավորումը իրականացվում է «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» -ի կողմից: Այն նախատեսված է 16 անձի շուրջօրյա բնակության և խնամքի համար: Կարևորելով հոգեկան խնդիրներ ունեցող անձանց սոցիալական ներառման խնդիրները, նախատեսվում է ապահովել ծրագրի շարունակականությունը, հետագայում ընդլայնել նման տների ստեղծումը, մասնավորապես՝ համայնքի մասնակցությամբ և պետության աջակցությամբ:
32. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող՝ 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքը իրականացվում է «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» պետական ոչ առևտրային

կազմակերպությանը կողմից: Կենտրոնում խնամքի ծառայություններ են ստանում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող այն անձիք, ովքեր կարիք չունեն ակտիվ բուժման, այլև ունեն իրենց գնահատված կարիքներին համապատասխան շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների կարիք:

33. Անկողնային հիվանդների համար խնամքի ու սոցիալական սպասարկման անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքում կառուցվել է նոր մասնաշենք անկողնային հիվանդների համար: Ներկայումս աշխատանքներ են տարվում նշված շենքը կահավորելու և անհրաժեշտ սարքավորումներով ապահովելու ուղղությամբ:

34. Կարևորելով հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ծառայություններ տրամադրող համայնքային ցերեկային կենտրոնների գործունեությունը՝ պետական աջակցություն է ցուցաբերվում «Փրկություն», «Հույսի կամուրջ», «Լիարժեք կյանք» և «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպություններին: Ցերեկային կենտրոններում խնամքի և սոցիալական այլ ծառայությունների մատուցումը նպաստում է ոչ միայն հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը, այլև նրանց ընտանիքների անդամների զբաղվածության հարցերի կարգավորմանը: Այս հանգամանքից ելնելով է. որ կառավարությունը տարեց-տարի ընդլայնում է նման կենտրոնների գործունեությունը: 2017 թվականից պետական աջակցություն կցուցաբերվի նաև «Իմ ուղին» սոցիալ-աբիլիտացիոն ցերեկային կենտրոնին՝ 18 տարեկանից բարձր տարիքի աուտիզմ ունեցող անձանց, զբաղվածության, հոգեբանական և սոցիալական ծառայություններ տրամադրելու նպատակով:

35. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի /այսուհետ՝ Հանձնաժողով/ աշխատանքները ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումն ապահովելու խնդիրների լուծմանը: Հանձնաժողովի նիստերի ընթացքում Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովների ներկայացուցիչների, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ քննարկվել են հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների վերաբերյալ բազմաթիվ հարցեր, ներկայացվել են համապատասխան առաջարկություններ դրանց կարգավորման ուղղությամբ:

36. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումն ապահովելու և ոլորտում համակարգված քաղաքականություն իրականացնելու նպատակով՝ մշակվում է «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2016-2021թթ համալիր ծրագիրը»:

37. Հասարակության իրազեկության բարձրացման նպատակով՝ հաշմանդամության հիմնախնդիրները պարբերաբար լուսաբանվել են

հեռուստատեսությամբ՝ նախարարության մասնագետների և ոլորտում գործող շահագրգիռ հասարակական կազմակերպությունների կողմից:

38. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ոլորտում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը սերտ համագործակցում է այլ հանրապետական գործադիր մարմինների, տարածքային ինքնակառավարման մարմինների, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ:

IV. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

39. Շարունակվելու են աշխատանքները հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները կանոնակարգող օրենսդրությունը ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելու ուղղությամբ, մասնավորապես՝

- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի ընդունում և համապատասխան ենթաօրենսդրական ակտերի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման մեխանիզմների ներդնում,
- «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2016-2021թթ համալիր ծրագրի» հաստատում և դրանից բխող մջոցառումների իրականացում,
- հաշմանդամության սահմանման և բժշկասոցիալական փորձաքննության անցկացման նոր սկզբունքների և մոտեցումների ներդնում:

40. Իրականացվելու են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց սոցիալական ներառման և կյանքի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ:

41. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտում 2017թ. տարեկան ծրագրով նախատեսվող միջոցառումները ուղղված են այդ անձանց իրավունքների ու շահերի պաշտպանությանը, հասարակություն ներառելու, նրանց համար հնարավորինս հավասար պայմաններ ստեղծելու և հավասար հնարավորություններ ապահովելու, բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգնողական գործընթացն առավելագույնս արդյունավետ կազմակերպելու, հաշմանդամություն ունեցող երեխաների ներառական կրթության ու հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խնդիրների լուծմանը:

42. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ու պաշտպանությանն ուղղված 2017 թվականի համար նախատեսված միջոցառումներն իրականացվելու են 11 հիմնական ուղղություններով (միջոցառումների ցանկը կցվում է):

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2016 թ.
սեպտեմբերի 29-ի նիստի N 38
արձանագրային որոշման

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2017 թվականի տարեկան ծրագրով նախատեսվող միջոցառումների ցանկ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Պատասխանատու կատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման չափը և աղբյուրը	Ակնկալվող արդյունքը
1.	**Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ**				
1.1.	Ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը ՄԱԿ-ի 2006թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	Հաշմանդամության սոցիալական մոդելի ներդրմանն ուղղված իրավական ակտերի առկայություն
1.2.	Հաշմանդամության սոցիալական մոդելի ներդրման շրջանակներում Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման (ՖՄԴ) սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման նոր մոդելի ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքներ:	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	Դոնոր կազմակերպություններ	Հաշմանդամության սահմանման նոր սկզբունքների ներդրում
1.3.	Տեղաշարժման դժվարություն	ՀՀ ոստիկանություն	Տարվա	Ֆինանսավորում	Հաշմանդամությամբ

	ունեցող անձանց համար անձը հաստատող փաստաթղթեր ստանալու գործընթացի մատչելիության ապահովում		ընթացքում	չի պահանջում	կամ հիվանդությամբ պայմանավորված ՀՀ քաղաքացիների կողմից կենսաչափական տվյալները ՀՀ ոստիկանությունում հանձնելն անհնարին լինելու դեպքում վերջիններիս հնարավորություն կտրվի կենսաչափական տվյալները հանձնել անձի գտնվելու վայրում:
2.	**Հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար և մատչելի պայմանների ապահովում**				
2.1.	Մայրաքաղաքի փողոցների խաչմերուկներում և բանուկ մասերում թեքահարթակների կառուցում	Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Երևան համայնքի բյուջե	Տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար հավասար և մատչելի պայմանների ապահովում
2.2.	Մայրաքաղաքի ներքաղաքային երթուղիներում շահագործող ավտոբուսների ուղեսրահներում կանգառների անվանումների բարձրաձայն հայտարարման սարքերի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների իրականացում, ինչպես նաև հաշմանդամություն	Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Երևան համայնքի բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքային հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության և հարմարավետության

	ունեցող անձանց սպասարկման համար հատուկ վերելակային հարմարանքների ձեռքբերում և ներքաղաքային երթուղիներում շահագործվող ավտոբուսների վրա դրանց տեղադրման աշխատանքների իրականացում				ապահովում, 5 ավտոբուսների վրա հատուկ վերելակային հարմարանքների տեղադրում
2.3.	Ճարտարապետահատակագծային ու նախագծային առաջադրանքների՝ նախագծանախահաշվային փաստաթղթերում հաշմանդամություն ունեցող անձանց համար սահմանված քաղաքաշինական նորմերի և պահանջների ապահովում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ՀՀ մշակույթի նախարարություն Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/ ՀՀ մարզպետարաններ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	Շենքերի և շինությունների կառուցման և հիմնանորոգման ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց համար սահմանված քաղաքաշինական նորմերի պահպանում՝ համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի,
2.4.	Հասարակական, արտադրական և բազմաբնակարան բնակելի շենքերի ճարտարապետահատակագծային առաջադրանքների կազմման, նախագծերի մշակման,	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	Հաշմանդամություն ունեցող անձանց համար սահմանված քաղաքաշինական նորմերի

	փորձաքննության և դրանց համաձայնեցման փուլերում հաշմանդամություն ունեցող անձանց համար սահմանված քաղաքաշինական նորմերի պահանջների նկատմամբ վերահսկողություն				պահանջների ապահովում
3.	**Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության և մասնագիտական ուսուցման ծրագրեր**				
3.1.	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /596 359.2 հազ. դրամ/	Շուրջ 5000 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների գնահատում:
3.2.	Հատուկ կրթության կազմակերպում 20 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/ ՀՀ մարզպետարաններ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /3 087 720.3 հազ դրամ/	Շուրջ 2000 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթության կազմակերպում
3.3.	«Մասնագիտական կրթություն և զբաղվածություն հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար» ծրագրի իրականացում	«Սեյվ դը չիլդրեն» «Մասնագիտական կրթության բարեփոխումներ» ՀԿ /համաձայնությամբ/ Գործընկերներ՝	Տարվա ընթացքում	Եվրամիություն	Հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար աշխատանքային պայմանների և հավասար

		ՀՀ ԿԳՆ, ՀՀ ԱՍՀՆ, LIFE ծրագրի շրջանակներում ստեղծված հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող ու սոցիալական ձեռնարկությունների և գործատուների ցանց:			հնարավորություն ների ստեղծում:
3.4.	Հանրապետության 203 հանրակրթական դպրոցում ներառական կրթության կազմակերպում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /3 838 113.4 հազ դրամ/	Շուրջ 6200 երեխայի համար ներառական կրթության ապահովում
3.5.	Միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ընդունելության ժամանակ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ ստանալու դեպքում 1-ին ու 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող և հաշմանդամ երեխայի	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /«Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում», «Բարձրագույն մասնագիտական	Միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններու

	կարգավիճակ ունեցող անձանց համար անվճար հիմունքներով կրթության ապահովում			կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» և «Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում» ծրագրերի շրջանակներում/	մ 1-ին ու 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց անվճար հիմունքներով կրթության կազմակերպում
3.6.	Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության և մասնագիտական ուսուցման ծրագրեր	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող մասնագետների պատրաստում /Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում 2011 թվականից հիմնադրված Հատուկ կրթության ֆակուլտետում, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մարզաառողջարարական ֆակուլտետում (Ադապտիվ

					ֆիզիկական կուլտուրա)/
3.7.	Արտակարգ իրավիճակների ժամանակ հաշմանդամություն ունեցող անձանց անվտանգության կանոնների վերաբերյալ դասընթացներ	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջում	Արտակարգ իրավիճակներում հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանվածության բարձրացում
4.	**Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանմանն ուղղված ծրագրեր**				
4.1.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Զբաղվածության պետական գործակալություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /87 945.0 հազ. դրամ/	Հաշմանդամություն ունեցող 250 անձանց աշխատանքի տեղավորման համար գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցում և 32 անձի հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում
4.2.	Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Զբաղվածության պետական գործակալություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /772.0 հազ. դրամ/	Հաշմանդամություն ունեցող 2 անձանց այլ վայրում աշխատանքի տեղավորում

4.3.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Զբաղվածության պետական գործակալություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /51 000.0 հազ. դրամ/	Հաշմանդամություն ունեցող 150 անձանց աշխատանքի տեղավորում
4.4.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց գործատուներին այցելության համար դրամական օգնության տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Զբաղվածության պետական գործակալություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /1 600.0 հազ. դրամ/	200 հաշմանդամություն ունեցող անձանց գործատուներին այցելության համար դրամական օգնության տրամադրում
4.5.	Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Զբաղվածության պետական գործակալություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /41 700.0 հազ. դրամ/	Հաշմանդամություն ունեցող 240 անձանց մասնագիտական ուսուցում
4.6.	Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Զբաղվածության պետական գործակալություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /11 762.5 հազ. դրամ/	Հաշմանդամություն ունեցող 35 անձանց կողմից մասնագիտական աշխատանքային փորձի ձեռքբերում
4.7.	Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ, ինչպես նաև անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Զբաղվածության պետական	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /24 000.0հազ. դրամ/	24 հաշմանդամություն ունեցող անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ,

		գործակալություն			ինչպես նաև անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում
4.8.	Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսության աջակցության տրամադրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Զբաղվածության պետական գործակալություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /44 100.0 հազ. դրամ/	525 հաշմանդամություն ունեցող անձանց սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսության աջակցության տրամադրում
4.9.	Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանկավոր զբաղվածության ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Զբաղվածության պետական գործակալություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /4 200.0 հազ. դրամ/	50 հաշմանդամություն ունեցող գործազուրիկ անձանց վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով ժամանկավոր զբաղվածության ապահովում
4.10.	«Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից աշխատանք	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /18 566.9 հազ. դրամ/	540 հաշմանդամություն ունեցող անձի ուսուցողական,

	փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայությունների իրականացում				խորհրդատվական և աշխատանքի վերականգնման ծառայությունների տրամադրում
5.	**Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման ծրագրեր**				
5.1.	Առավել կարիքավոր հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների համար սոցիալական աջակցության ծրագրերի իրականացում	Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Երևան համանքի բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական աջակցության միջոցով կարիքի բավարարում, սոցիալական վիճակի բարելավում
5.2.	Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի և սպասարկման իրականացում /հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են տուն ինտերնատներում խնամվողների շուրջ 70 %/	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /1 524 289.8 հազ. դրամ/	850 հաշմանդամություն ունեցող անձի շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման կազմակերպում
5.3.	Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկման իրականացում /հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են սպասարկվողների շուրջ 33%-ը/	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /47 107.2 հազ. դրամ/	Շուրջ 500 հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական սպասարկման կազմակերպում տնային պայմաններում
5.4.	Խնամքի և սոցիալական	ՀՀ աշխատանքի և	Տարվա	ՀՀ պետական	30

	սպասարկման ծառայությունների տրամադրում "Ձորակ" հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնում	սոցիալական հարցերի նախարարություն	ընթացքում	բյուջե /17 850.9 հազ.դրամ/	հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական սպասարկում ցերեկային կենտրոնում
5.5.	Տնային պայմաններում և ցերեկային կենտրոններում ծեր և հաշմանդամություն ունեցող քաղաքացիների սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրում /հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են սպասարկվողների շուրջ 34 %-ը/	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն “Առաքելություն Հայաստան” ԲՀԿ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /74 732.8 հազ. դրամ/	1290 հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական սպասարկում ցերեկային կենտրոններում և տնային պայմաններում
5.6.	Մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդների ցերեկային խնամքի սոցիալ-վերականգնողական ծառայություններ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն "Փրկություն" Հ/Կ /համաձայնությամբ	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /24 աշխատողի աշխատավարձի վճարում/ /27 889.8 հազ. դրամ/	Մտավոր խնդիրներ ունեցող ամսական միջինը 50 հաշմանդամություն ունեցող անձի ցերեկային խնամքի սոցիալ-վերականգնողական ծառայությունների տրամադրում
5.7.	Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն "Լիարժեք կյանք" Հ/Կ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /13 աշխատողի աշխատավարձի վճարում/	ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի ամսական միջինը 60

				/11 349.3 հազ. դրամ/	շահառուի սոցիալ հոգեբանական աջակցության տրամադրում:
5.8.	18 տարեկանից բարձր տարիքի աուտիզմ ունեցող անձանց զբաղվածության և սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրում ցերեկային կենտրոնում:	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, «Իմ ուղին» սոցիալ-աբիլիտացիոն կենտրոն /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /30 աշխատողի աշխատավարձի վճարում/ /26 190.7 հազ. դրամ/	Շուրջ 80 աուտիզմ ունեցող անձանց զբաղվածության և սոցիալական ներառման ապահովում
5.9.	1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց ներքաղաքային էլեկտրատրանսպորտով անվճար երթևեկելու համար վկայականների տրամադրում	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	Տարվա ընթացքում	«Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ի տարեկան աշխատանքների ծավալի շրջանակներում ՀՀ պետական բյուջե /200.0 հազ. դրամ/	1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց ներքաղաքային էլեկտրատրանսպորտով անվճար երթևկության ապահովում
6.	**Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող բժշկական օգնության, այդ թվում նաև վերականգնողական ծրագրեր**				
6.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնությանն ու վերականգնմանն ուղղված ծրագրերի իրականացում	ՀՀ առողջապահության նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /7 340 000.0 հազ. դրամ/	Հաշմանդամություն ունեցող անձանց հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում, այդ թվում նաև

					վերականգնողական ծառայությունների մատուցում, ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում, հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների իրականացում
6.2.	1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց և հաշմանդամ երեխաներին անվճար, 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց՝ 50 տոկոս զեղչով դեղերի տրամադրում	ՀՀ առողջապահության նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /900 000.0 հազ. դրամ/	Հաշմանդամություն ունեցող անձանց դեղերով ապահովում՝ ըստ դիմելիության
6.3.	Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնման աշխատանքների կազմակերպում և իրականացում «ԱՐԹՄԵԴ» ԲՎԿ-ում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /181 637.2 հազ. դրամ/	818 հաշմանդամություն ունեցող և սոցիալապես անապահով անձանց բժշկասոցիալական և հոգեկան առող-ջության վերականգնում հիվանդանոցային պայմաններում
7.	**Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական, տեխնիկական և այլ օժանդակ միջոցներով ապահովման ծրագրեր**				
7.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց	ՀՀ աշխատանքի և	Տարվա	ՀՀ պետական	Հաշմանդամություն

	պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովում, դրանց վերանորոգում, այդ թվում՝	սոցիալական հարցերի նախարարություն	ընթացքում	բյուջե /856 347.0 հազ. դրամ/	ունեցող անձանց շուրջ 13 545 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրում, վերանորոգում, այդ թվում ձայնաստեղծ սարքով կամ պրոթեզով և աչքի պրոթեզով ապահովում
7.1.1.	Ձայնաստեղծ սարքերով ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /34 500.0 հազ. դրամ/	Հաշմանդամություն ունեցող 100 անձանց ձայնաստեղծ սարքով կամ պրոթեզով ապահովում
7.1.2.	Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համար աչքի պրոթեզավորման իրականացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /13 000.0 հազ. դրամ/	Հաշմանդամություն ունեցող 200 անձանց աչքի պրոթեզով ապահովում:
7.2.	Հաշմանդամություն ունեցող անձանց սայլակներով և հաշմանդամություն ունեցող անձանց ու տարիքային կեն-	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /103 500.0 հազ.	ԱՊՀ երկրների արտադրության կամ դրան համարժեք

	սաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց լսողական սարքերով ապահովում, այդ թվում՝			դրամ /	լսողական սարքեր, հաշմանդամի սայլակներ, մինչև 12 տարեկան երեխաների համար լսողական սարքի:
7.2.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց սայլակներով ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /55 800.0 հազ. դրամ/	600 անձի հաշմանդամի սայլակներով ապահով
7.2.2.	Հաշմանդամություն ունեցող անձանց և տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձանց ԱՊՀ երկրների արտադրու-թյան լսողական սարքերով ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /42 900.0 հազ. դրամ/	լսողության խանգարում ունեցող 1100 անձ ապահովվել է ԱՊՀ երկրների արտադրության լսողական սարքերով
7.2.3.	Մինչև 12 տարեկան երեխաներին լսողական սարքի ներդիրներով ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /4 800.0 հազ. դրամ/	200 երեխայի 400 հատ լսողական սարքի ներդիրների տրամադրում
7.3.	Լսողության խնդիր ունեցող 12-18 տարեկան երեխաներին և 18-30 տարեկան հաշմանդամություն ունեցող երիտասարդներին եվրոպա-կան արտադրության լսողական սարքերի ձեռքբերման համար հավաստագրերով ապահովում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /16 000.0 հազ. դրամ/	Եվրոպական արտադրության լսողական սարքերի ձեռքբերման համար 200 հավաստագրերով ապահովում

7.4.	Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ /Բրայլյան/ տառատեսակով գրքերի, տետրերի, բյուլետենների տպագրում և «Խոսող գրքերի» ձայնագրում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /10 506.4 հազ. դրամ/	74400 թերթ ՀԿՄ օրգան ամենամսյա «Բյուլետեն» ամսագրի, 42327 թերթ Բրայլյան գրքի, 320 հատ բրայլյան տետրի տպագրություն և 1600ժ տևողությամբ «Խոսող գիրք»-ի ձայնագրություն
8.	**Հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրումը հասարակություն մշակույթի և սպորտի միջոցով**				
8.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն նեռարման նպատակով • Պարալիմպիկ մարզիկների համար բասկետբոլի, ծանրամարտի, լողի, շախմատի, սեղանի թենիսի մրցաշարերի կազմակերպում, • Երևան քաղաքի սպարտակիադայի կազմակերպում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությամբ. • Ապահովել Երևան քաղաքի թիմի մասնակցությունը ՀՀ նախագահի մրցանակի համար	Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Երևան համայնքի բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց ներառում հասարակություն սպորտի միջոցով

	«Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» հանրապետական մրցույթին. • Երևանի հատուկ դպրոցների աշակերտների համար ֆուտբոլի մրցաշարի կազմակերպում.				
8.2.	Հաշմանդամություն ունեցող երեխաների համար այցելությունների կազմակերպում Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող մշակութային կազմակերպություններ	Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Երևան համայնքի բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց ներառում հասարակություն մշակութային միջոցառումների միջոցով
8.3.	Պետական աջակցություն «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպությանը, «Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպությանը, «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպությանը, «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպությանը	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /9 000.0 հազ. դրամ/	Հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացում, առողջ ապրելակերպի արմատավորում
8.4.	«Լավագույն մարզական ընտանիք»	ՀՀ սպորտի և	հուլիս-	ՀՀ պետական	Հաշմանդամություն

	մրցույթի շրջանակում անցկացվող մրցույթ՝ սայլակով տեղաշարժվող՝ հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքների համար	երիտասարդության հարցերի նախարարություն	օգոստոս	բյուջե /6 341.8 հազ. դրամ/	ունեցող անձանց ներառում հասարակություն սպորտի միջոցով
8.5.	«Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	սեպտեմբեր-հոկտեմբեր	ՀՀ պետական բյուջե /16 945.3 հազ. դրամ/	Հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում, սոցիալական հավասարության, մարմնակրթական և այլ ընդհանուր հետագա գործունե-ության զարգացում, հաշմանդամության տարբեր խմբերի անձանց հասարակությանը ինտեգրման գործընթացի խթանում
8.6.	«Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի Երևանի, Լոռու, Շիրակի և Գեղարքունիքի մարզերի մասնաճյուղերում գեղագիտական, արհեստագործության ուսուցման ծրագրերի իրականացում	ՀՀ մշակույթի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /105 286.5 հազ. դրամ/	Հաշմանդամություն ունեցող, երեխաների համար արվեստի և արհեստների (12 մասնագիտություն) անվճար ուսուցում
8.7.	«Ընտանեկան գրադարանավար» ծրագրի իրականացում /Լոռու, Շիրակի մարզեր/	ՀՀ մշակույթի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /774.0 հազ.	Տեղաշարժման խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց

				դրամ/	համար գրադարանային սպասարկում տնային պայմաններում
8.8.	Կույր և թույլ տեսնող անձանց տեղեկատվության ապահովման նպատակով գրադարաններում «Արև» տեղեկատվական հաղորդակցման ծրագրի իրականացում (Հայաստանի ազգային գրադարան, Խնկո-Ապոր անվան մանկական ազգային գրադարան, մարզային 10 գրադարաններ)	ՀՀ մշակույթի նախարարություն	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջում	Կույր և թույլ տեսնող անձանց համար մատչելի եղանակով տեղեկատվության տրամադրում
8.9.	ՀՀ և ԼՂՀ հաշմանդամություն ունեցող շնորհալի երեխաների տեղեկատվական բանկի համալրում	ՀՀ մշակույթի նախարարություն	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջում	ՀՀ և ԼՂՀ հաշմանդամություն ունեցող շնորհալի երեխաների տեղեկատվական բանկում ընդգրկված երեխաների համար հանրապետական և միջազգային փառատոներին, ցուցա-հանդեսներին, համերգներին մասնակցության ապահովում
8.10.	Ստեղծագործական ծրագրերի նպատակային աջակցություն (ցուցահանդեսների, համերգների, փառատոների, մրցույթների և այլ	ՀՀ մշակույթի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց ներառում հասարակական և

	մշակութային ծրարգրերի մասնակցություն)				մշակութային կյանքին
9.	**Սոցիալական գործընկերություն հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների միջև**				
9.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի իրագործում, հանդիպումների և քննարկումների կազմակերպում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջում	Պետական և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության ընդլայնում և խթանում
9.2.	Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային և մարզային /Երևան քաղաքի/ հանձնաժողովների աշխատանքների իրականացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային /Երևան քաղաքի/ հանձնաժողովներ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց սոցիալական ներառման գործընթացի խթանում
10.	**Տպագրության ծառայությունների իրականացում**				
10.1.	ԲՍՓ ձևաթղթերի տպագրության ծառայությունների իրականացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /4 196.2 հազ. դրամ/	ԲՍՓ գործընթացի իրականացման համար ձևաթղթերով ապահովում

10.2.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար նախատեսված ծրագրերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակում, հրատարակում և ձեռքբերում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /16 000.0 հազ. դրամ/	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար ուսումնական նյութերի ապահովում
11.	**Հանրային իրազեկում**				
11.1.	Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի և դրանց կարգավորման ուղղությամբ իրականացվող աշխատանքների վերաբերյալ հանրության իրազեկում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/ հասարակական կազմակերպություններ /համաձայնությամբ/	Տարվա ընթացքում	ՀՀ պետական բյուջե /«Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակներում/ դոնոր կազմակերպություններ Երևան համայնքի բյուջե	Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների և դրանց կարգավորման ուղղությամբ իրականացվող աշխատանքների լուսաբանում՝ գրքույկների, բուկլետների, մեթոդական ուղեցույցների տպագրում, հեռուստահաղորդումների կազմակերպում, հոդվածների տպագրում